

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՐԱԳՐԵՐԻ ԽՆՍՏԻՏՈՒՏ-«ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ»  
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

№ 16

1994

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ 1941—1945 թթ. ՊԱՏԵՐԱՋՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ<sup>1</sup>

1941—1945 թթ. պատերազմի տարիները, ինչպես մեր երկրի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների, մշակութային ու գիտական հաստատությունների, այնպես էլ Մատենադարանի համար եղել են բազում դժվարությունների և ծանր փորձությունների լարված տարիներ։ Նրա փոքրաթիվ անձնակազմի մեծ մասը մեկնել է բանակ և ուղարկված պատվով կատարել իր պարտքը։ Նրանցից ումանք զոհվել կամ վիրավորվել են, մի քանիսը, ծանր պայմաններում, զերի են ընկել հիտերականների ձեռքը, կրել աննկարագրելի տանջանքներ՝ երբեք չկորցնելով վերջնական հաղթանակի, կրկին Հայրենիք վերադառնալու հույսը։ Թիկունքում մնացածները, կրկնապատկելով իրենց եռանդը, կարողացել են հաջողությամբ շարունակել ձեռագրերի պահպանության, ինամբ և ուսումնասիրման աշխատանքները։

Պատերազմին նախորդող տարիներին Մատենադարանի կյանքում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ։ Հայաստանի կառավարության որոշմամբ Մատենադարանը Վաղարշապատից փոխադրվեց Երևան։ Վաղարշապատում պայմանները բարենպաստ չէին։ Բացակայում էր ձեռագրերի գիտական մեթոդներով մշակված ինամբը, իսկ նորոգման գործը զեր չէր սկսվել։ Տարբեր պատճառներով շատ դանդաղ էին ընթանում գիտահետազոտական աշխատանքները։ Մեծապես զգացվում էր թե պահպանող ու նորոգող, և թե ուսումնասիրող կազմերի խիստ պակաս։

Մատենադարանի փոխադրումը Երևան, ըստ Հայաստանի Լուսժողկոմի 1939 թ. հունիսի 1-ի № 151 հրամանի, պետք է ավարտվեր մինչև այդ թվականի սեպտեմբերի 1-ը<sup>2</sup>, բայց ձգձգվեց և ավարտվեց 1940 թ. գարնանը<sup>3</sup>։

Արխիվային փաստաթղթերը վկայում են, թե որքան դժվարություններ են հաղթահարել Մատենադարանի աշխատակիցներն այդ փոխադրումները կատարելիս՝ դիրեկտոր Երվանդ Թորոսյանի և 1940 թ. փետրվարի 17-ից<sup>4</sup> նրան փոխարինած Գևորգ Արովի գլխավորությամբ։

1 Որպես զեկուցում ընթերցվել է Հայրենական պատերազմի հաղթական ավարտի 40-ամյակին նվիրված Մատենադարանի գիտական խորհրդի հանդիսավոր նիստում՝ 1985 թ. մայիսին։

2 Մատենադարանի արխիվ, թղթ. 79, վավ. 42, էջ 1։

3 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 86։

4 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 188, էջ 3։

Հաջորդ կարևոր իրազարձությունը Մատենադարանի համար այն է, որ ուրիշ բերվեց Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի ենթակայությունից և դարձվեց Հայաստանի ժողովրդապետին կից հաստատություն: Եթե նախկինում այն կոչվում էր Վաղարշապատի կենտրոնական Զեռագրատուն (Մատենադարան), ապա ժողովրդապետի 1940 թ. ապրիլի 5-ի որոշմամբ անվանվեց «Հայկական ԽՍՀ ժողովրդապետին կից Զեռագրատուն (Մատենադարան)». 1941 թվականի հունվարի 10-ին ժողովրդապետը հաստատեց Մատենադարանի կանոնադրությունը<sup>5</sup>:

Մատենադարանը համապատասխան դիտական կազմերով ապահովելու համար կատարվեց աննախընթաց մի քայլ՝ 1940 թ. սեպտեմբերի 17-ին Մատենադարանին կից բացվեց ասպիրանտուրա: Առաջին ասպիրանտները դարձան համալսարանի կողմից երաշխավորված և արդեն ձեռագրատանը դործնական աշխատանքի փորձ ձեռք բերած կեռն Խաչիկյանը, Վիգեն Խեցումյանը, ինչպես նաև Փայլակ Գրիգորյանը, Ավետիս Ղուկասյանը և Ամալյա Աճեմյանը<sup>6</sup>:

Ժողովրդապետի նույն որոշման համաձայն ստեղծվում է Մատենադարանի դիտական խորհուրդ, որի մեջ հաստատվում են ակադեմիկոսներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Ի. Զավախիսաշվիլին, պրոֆեսորներ՝ Մ. Արեգյանը, Ա. Տեր-Ավետիսյանը, Հ. Մելիքյանը, Գ. Արովը (նախագահ), գրող Դ. Դեմիրճյանը, ավագ դիտական աշխատակիցներ՝ Ա. Շահնազարյանը, Ա. Արրահամյանը, Ե. Թորոսյանը, Ի. Արուլաձեն, Բ. Առաքելյանը, Ա. Կարապետյանը և ժողովրդապետի նախագահի տեղակալ Գ. Աղբալյանը<sup>7</sup>: Դիտական խորհրդի նիստերին հրավիրվածների ցուցակում են Մ. Սարյանը, պրոֆ. Հ. Աճառյանը, պրոֆ. Ա. Հովհաննիսյանը, Ե. Տեր-Մինասյանը, Ռ. Դրամբյանը, Վ. Զալոյանը, Հ. Ժամկոչյանը, Ա. Պողոսյանը, Մ. Մկրյանը, Կ. Ղաֆազարյանը, պրոֆ. Լ. Հովհաննիսյանը, Ռ. Զարյանը և ուրիշներ<sup>8</sup>:

1940 թ. հոկտեմբերի 27-ից 29-ը տեղի ունեցավ Մատենադարանի առաջին դիտական նստաշրջանը, որի ժամանակ արժեքավոր զեկուցումներով հանդիս եկան պրոֆեսորներ Մ. Արեգյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Լ. Սիմյոնովը, դոցենտ Ի. Արուլաձեն և ուրիշներ: Այդ զեկուցումները հետագայում հրապարակվեցին դիտական հանդեսներում:

Երևան տեղափոխվելուց հետո Մատենադարանին տրվեցին նոր հաստիքներ, աշխատանքի ընդունվեցին մի շարք նոր, երիտասարդ խոստումնալից կազմեր, որոնց թվում Կ. Մուրադյանը (Գեորգ Էմին), Ա. Մնացականյանը, Գ. Արգարյանը, Շ. Դաղրաշյանը, Մ. Սաղումյանը, Ա. Ավագյանը և ուրիշներ: Ստեղծվեց նաև գիտնական քարտուղարի պաշտոն և Մատենադարանի առաջին գիտնական քարտուղար դարձավ Վարդես Համազասպյանը: Հիմնվեց ձեռագրերի հիգիենիկ պահպանման և նորոգման բաժին: Ձեռք բերվեց լուսանկարչական ապարատ և սկսվեց ձեռագրերի նկարահանման աշխատանքներ: Լուրջ աշխատանքներ ծավալվեցին ձեռագրացուցակի պատրաստման ուղղությամբ, շարունակվեցին արխիվային վավերագրերի նկա-

5 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 57:

6 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 133, էջ 23:

7 Նույն տեղում, թղթ. 79, վավ. 148, էջ 5:

8 Նույն տեղում:

բազման աշխատանքները։ Մատենադարանում բացվեց Հայ պոեզիայի ցուցահանդես։

Ահա ստեղծադորձական այս նոր վերելքի, նոր ծրագրերի իրականացման ճանապարհին էր Մատենադարանը, երբ սկսվեց պատերազմը։

Մատենադարանի 31 հոգուց բաղկացած անձնակազմից ղորակուվեցին 23-ը։ Հետագայում բանակից վերադարձան Աշոտ Արքահամյանը և Էնոն Խաչիկյանը։

Մնացած աշխատակիցների, ինչպես նաև նոր բնդունվածների ջանքերով Մատենադարանը սկսեց Հարմարվել պատերազմական պայմաններին։

Ժամանակավորապես դադարեցվեց ձեռագրերից և արխիվային փակերագրերից օգտվելը<sup>9</sup>։ Խոկ № 83 հրամանով կարգադրվեց ձեռագրերը տեղափորել սնդուկների մեջ՝ անհրաժեշտության դեպքում թաքստոցներն իջեցնելու համար։

«Ձեռագրերի դասավորումը պետք է սկսվի № 1 ձեռագրից և համարական կարգով դասավորվի սնդուկներում», — ասվում էր հրամանում։ Սնդուկները ներսից պատված են լինելու մաքոր թղթով, կողպվելու և կնքվելու են<sup>10</sup>։ 1941 թ. հունիսի 25-ի № 2/331 գրությամբ ժողկոմսովետի նախագահ Ա. Փիրուցյանը Մատենադարանին թույլ է տալիս 20.000 ռ. ծախսել սնդուկներ և յուղաթուղթ ձեռք բերելու համար<sup>11</sup>։ Անհրաժեշտ էր շտագ կարգով պատրաստել տալ 250 սնդուկ։ Դիրեկտորի հուլիսի 10-ի № 29 հրամանի համաձայն բոլոր աշխատակիցները պարտադիր մասնակցելու էին Հակաօդային պաշտպանության պարագմունքներին<sup>12</sup>։

Պատերազմի հինգերորդ օրը Մատենադարանում կազմակերպվում է Վորոշիլովյան հրաձիգների նորմաները Հանձնող խմբակ, որի մեջ ընդգրկվում են 12 հոգի։ Դրանց թվում էին Գ. Արովը, Վ. Համազասպյանը, Ա. Մնացականյանը և ուրիշներ<sup>13</sup>։

Մատենադարանում ստեղծվում է նաև աշխարհազորային ջոկատ։ Քանի որ անձնակազմը փոքրաթիվ էր, որոշվում է միանալ Հեղափոխության թանգարանի կոլեկտիվի հետ և կազմել 20 հոգիանոց ջոկատ<sup>14</sup>։

Ինչպես ամենուրեք, այսպես էլ Մատենադարանում մտցվում է լուսաքողարկում։ Զերք են բերվում հրշեց դործիքներ, շոր կրակմարիչներ, միջանցքներում դրվում են ավազով լեցուն արկղներ<sup>15</sup>։

Մատենադարանի դիրեկտորի № 106 հրամանի համաձայն (17 հուլիսի) կազմվում է 3 խումբ՝ ինքնապաշտպանության փոսեր կամ ոմբապաստարաններ փորելու համար։ Մատենադարանցիներն աշխատում էին առավոտյան ժ. 8-ից մինչև 2-ը և ապա 18-ից մինչև 24-ը։

Երբ ստացվում են սնդուկները, սկսվում է ձեռագրերը նրանց մեջ տեղավորելու գործը։ Նախապես նրանք մաքրվել են, թղթերի մեջ փաթաթվել և

9 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 30ր։

10 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 17—18։

11 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 63։

12 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 75, էջ 21։

13 Նույն տեղում, էջ 43, 127։

14 Նույն տեղում, էջ 126—127։

15 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 90, էջ 471։

դրվել սնդուկները, որոնք կողմանի և կնքվել են: Ապա համարակալված սընդուկները դասավորվել են կիսակլոր զահնիճում:

Երկիրը պատերազմական վիճակում էր: Մտցվել էր ռազմական հարկ: Ամենուրեք կրծատվում էին ռազմական նշանակություն չունեցող հիմնարկների հաստիքները: Այդպիսի կրծատումներ են կատարվում նաև Մատենադարանում: Հետև՝ ֆին. ժողկումատի կարգադրությամբ Մատենադարանի դիրեկտորը 1941 թ. օգոստոսի 25-ի № 113 հրամանով վերացնում է զիտնական քարտուղարի, ձեռադրատան, արխիվային, գրադարանային և մամուլի բաժինների վարիչների հաստիքները, կրծատվում են քիմիկոսի, ոռուերեն մեքենագրություն, արեելյան լիզուների մասնագետի, երեկոյան հերթի գրադարանային աշխատողի և լուսանկարչի պաշտոնները: Կրծատումներից տընտեսված զումարներով ավելացվում է հրշեց պահակների թիվը, հասցվելով 6 հոգու և ձեռադրատան վրա սահմանվում է 24 ժամյա հերթապահություն<sup>16</sup>:

Ստեղծված պայմաններում մատենադարանցիներից պահանջվում էր բարձր զիտակցականություն և ամուր կարգապահություն: Հատկապես պրոֆ. Դ. Աբովի դիրեկտոր նշանակվելուց հետո Մատենադարանում հաստատվել էր խիստ կարգ ու կանոն:

Մատենադարանը ստանձնել էր № 70 զինվորական հիվանդանոցի շեֆությունը և իր կարողության սահմաններում ձգտում էր օգնել վիրավոր զինվորներին:

Մատենադարանի աշխատակիցները զդալի գործ կատարեցին ձեռադրերի և արխիվային վավերագրերի ցուցակագրման, դասավորման և նկարագրության ուղղությամբ: Մենք երախտապարտ ենք նրանց այն օրինակելի կարգությունը կանոնի համար, որ այսօր դոյլություն ունի մեր ձեռադրատանն ու արխիվում: Այն դժվարին պայմաններում նրանք ջանք շխնայեցին հազարավոր ձեռադրերի էջակալման, ցուցակագրման, ըստ բովանդակության թեմատիկ ցուցակներ սյատրաստելու, հազարավոր փաստաթղթեր կարգի բերելու, համարակալելու և մեկ առ մեկ նկարագրելու համար՝ մի գործ, որպիսին մինչև այժմ չի կատարված հԱՀՄ և ոչ մի արխիվում: Ամենուրեք նկարագրված են ոչ թե առանձին փաստաթղթերը, այլ հարյուրավոր վավերագրեր պարունակող գործերը միայն:

Կտրվելով աշխատանքից և մեկնելով ռազմաճակատ, նրանք անհանգըտացել են իրենց աշխատանքի հետագա ընթացքի համար: Այդ անհանգստությունն է պատճառ դարձել մի բացառիկ փաստաթղթի ստեղծման, որը դուրս է եկել Մատենադարանի լավագույն աշխատակիցներից մեկի, արխիվային բաժնի վարիչ Հարություն Աբրահամյանի գրչի տակից:

Պատերազմի սկզբի օրերին, բանակ գնալուց առաջ Հ. Աբրահամյանը կազմել է մի զրություն հետևյալ վերնագրով. «Մի քանի տեղեկություններ և պատվերներ ինձանից հետո արխիվում աշխատող ընկերներին»<sup>17</sup>:

Ընդհատվել էր նրա լարված աշխատանքը սինողի, կաթողիկոսական դիվանի և անհատական արխիվների դասավորման ու ցուցակագրման ժամանակ և նա մտահոգված էր գործի շարունակության և հաջող ավարտի համար, ուստի կետ առ կետ թվարկում է այն ամենը, ինչ պետք է անենին իրենից

16 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 76, էջ 1—2:

17 Նույն տեղում, թղթ. 80, վավ. 2ա—դ:

Հետո աշխատողները, նույնիսկ նշում, թե որտե՞ղ են դրված գրանցման մատյանները և քարտերը։ Հետո իր զբածք մերինագրել է տվել Յ օրինակ, դրել ամսաթիվը՝ 10 հունիսի 1941 թ., ստորագրել ու հանձնել Մատենադարանին։

Նա կարծես զգում էր, որ այլևս չի վերադառնալու Մատենադարան։ Եվ իրոք, Հ. Արրաջամցանը, որի պատրաստած Կալվածադրերի և տնտեսական գործարքների վերաբերյալ փաստաթղթերի ժողովածուն լույս տեսավ 1941 թ., զոհվեց պատերազմում։ Եվ Հիմա նրա թողած այդ պատվերները կարծեք կտակի ուժ են ստացել և պատվիրում են իրենից Հետո աշխատող բոլոր ընկերներին բարեխիղճ, սրտացավ մոռեցում ունենալ հանձնարարված գործին և մեծ սեր տածել մեր նախնիներից մնացած գրավոր հուշարձանների նկատմամբ։ Ցավալի է, որ այս ոչ սովորական դրությունը մինչեւ այժմ մնացել է ստվերի մեջ։ Մինչդեռ այդ փաստաթղթի և հայրենիքի պաշտպանության համար իր կյանքը զոհաբերած նրա հեղինակի մասին պետք է իմանան բոլոր։

1941 թվականին Մատենադարանի գիտական խորհուրդն ունեցել է երկու նիստ։ Առաջինը հունվարի 10-ին, երերորդը հունիսի 18-ին։ Այս նիստում որոշվեց Հրատարակել «Պատմություն Տարօնոյ» երեր և միջնադարյան տաղերգուների գործերի թեմատիկ ցուցակը։ Անհրաժեշտ համարվեց Հրատարակության պատրաստել ձեռագրերի համառոտ ցուցակը և կազմել թեմատիկ այլ ցուցակներ։ Պատերազմը, որ սկսվեց երերորդ նիստից շորս օր անց, իր ուղղումները մտցրեց Մատենադարանի աշխատանքային ծրագրերի մեջ, բայց ինչպես Հետո կտեսնենք, այնուամենայնիվ Տարոնի պատմությունը հաջողվեց Հրատարակել և մեծ աշխատանք տարվեց թեմատիկ ցուցակներ ստեղծելու ուղղությամբ՝ մի շատ կարևոր դորձ, որը զյուրացրեց և շարունակում է դյուրացնել ձեռագրերի ուսումնասիրության ուղղությամբ տարվող աշխատանքները։

1942 թվականի սեպտեմբերին, երբ թշնամին դտնվում էր Կովկասյան լեռներում և վտանգ կար, որ երեանն էլ կենթարկվի ոմբակոծության, որոշվում է ձեռագրերով ու փաստաթղթերով լեցուն սնդուկները տեղափոխել շենքի ներքնահարկը։ Կազմվում է հինգ հոգուց բաղկացած փոխադրման հանձնաժողով, դիրեկտորը ստորագրում է N 38 Հրամանը, որով ամենարծախընդիր կերպով որոշվում է փոխադրումը ապահով ձեռվ կատարելու եղանակը։ Դրան փաստորեն մասնակցելու էին բոլոր աշխատակիցները։ Այն սկսվում է սեպտեմբերի 6-ին։ Սնդուկներն իշեցվում են ներքնահարկը, որի մուտքերն ամուր փակվում են, կնքվում և հանձնվում պահակների ու հրշեցների հրակողությանը։

Պատերազմի նախօրյակին Մատենադարանում զգալի թվով ընթերցողներ էին լինում։ 1940 թ. մարտի 11-ից մինչև 1941 թ. մարտի 28-ը ընթերցման համար տրվել են 3728 ձեռագրեր, որոնցից դրսի ընթերցողներին՝ 2638, աշխատակիցներին՝ 1190 ձեռագրեր<sup>18</sup>։ Պատերազմը սկսվելուց անմիշապես Հետո, ինչպես վերը նշեցինք, ձեռագրերի ընթերցումն արգելվեց, չնայած դրան, գիտական աշխատանքը շարունակվում էր։ Դիրեկտորը 1943 թ. հունվարի 16-ի N 6 Հրամանով կարգադրում է կազմել հանձնաժողով՝ ձե-

ուսպեկտի հիշատակարանները հրատարակության պատրաստելու համար: Հանձնաժողովի մեջ են եղել Գ. Արովը (նախագահ), Ա. Արքահամյանը, Ե. Տեր-Մինասյանը և Ռ. Տիտանյանը (քարտուղար): Հանձնաժողովը պետք է ձեռագրերի արդեն արտադրված հիշատակարաններից ընտրեր ու հրատարակության պատրաստեր կարենագույն հիշատակարանները. «Պատերազմի պատճառով զրկված լինելով հիշատակարանները բնագրերի հետ համեմատելու աշխատանքից, վերջինս հետաձգվում է մինչև համապատասխան պայմանների ստեղծումը»<sup>19</sup>:

Քանի որ զիտական խորհրդի անդամներից մի քանիսը բանակ էին զնացել, Մատենադարանի դիրեկտորը դիմում է ՀԿ(Բ)Պ կենտրոնի քարտուղար Ս. Կ. Կարապետյանին և խնդրում զիտական խորհրդի հաստատել հետեւյալ կազմով.

- |                  |                                |
|------------------|--------------------------------|
| 1. Կարապետյան Ս. | 8. Օրեմյան Ս.                  |
| 2. Աղքալյան Գ.   | 9. Սարգսյան Խ.                 |
| 3. Օրբելի Հ.     | 10. Տեր-Ավետիսյան Ս.           |
| 4. Մանանյան Հ.   | 11. Ազատյան Վ.                 |
| 5. Արեգյան Մ.    | 12. Արուլաձե Ի.                |
| 6. Արով Գ.       | 13. Սիմյոնով Լ.                |
| 7. Լևոնյան Գ.    | 14. Իսահակյան Ա. <sup>20</sup> |

Բնական է, որ պատերազմի պատճառով դրսից եկող ընթերցողներ էլ շկային, միայն մի անգամ՝ 1943 թ. Հոկտեմբերի 9-ին Մոսկվայից ստացվեց հայտնի ասորագետ Մ. Պիգուլևսկայայի նամակը, որով նա հայտնում էր, թե ակադ. Մարից ժամանակին ինքը տեղեկացել է, որ Մատենադարանում կան ասորերին ձեռագրեր ու պատափիներ: Նա խնդրում է միջնորդի ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահությանը, որպեսզի իրեն երկու ամսով գործուղեն երևան, քանի որ ինքն արդեն հրատարակել է Մոսկվայի ու Լենինգրադի ասորերին ձեռագրերի ցուցակը և այժմ կամենում է ուսումնասիրել Մատենադարանի ասորերին ձեռագրերը<sup>21</sup>: Զեռագրերն արդեն փակված էին սնդուկներում և դադարեցված էր նրանց օգտագործումը, պետք է ենթադրի, որ Մ. Պիգուլևսկայային ուղարկվել է բացասական պատասխան:

1943 թվականի Հունվարի 14-ին Մատենադարանի դիրեկտոր Գ. Արովը մեկ ամսով ուղարկվում է ռազմաճակատ: Այդ կապակցությամբ տրված № 2 հրամանով (13/1 1943 թ.) նա շենքի պահպանության հսկողությունը դնում է Գ. Միքայելյանի վրա և կարգադրում ուժեղացնել հսկողությունը<sup>22</sup>:

Մատենադարանի դիրեկտորն, ըստ երևույթին, ռազմաճակատ էր մեկնել հայ դրողների և մշակույթի գործիչների պատվիրակության կազմում, որը առաջադրանք ուներ հանդիպումներ ունենալ ռազմաճակատի հայ մարտիկների ու հրամանատարների հետ, հասցնել նրանց հայ ժողովրդի պահանջը՝ ուժեղացնել ատելի թշնամուն երկրից դուրս վոնդելու և վերջնականապես

<sup>19</sup> Նույն տեղում, թղթ. 81, վագ. 38ա, նաև թղթ. 80, վագ. 111:

<sup>20</sup> Նույն տեղում, թղթ. 80, վագ. 103:

<sup>21</sup> Նույն տեղում, թղթ. 80, վագ. 116թ:

<sup>22</sup> Թղթ. 80, վագ. 113:

շախշախիլու գործը: Մատենադարանի դիրեկտորին այդ պատվիրակության հետ ճակատ ուղարկելը վկայում է այն մեծ կարևորության մասին, որ տըր-վում էր Մատենադարանին թե մեր ժողովրդի, և թե կառավարության կողմից: Մեկ ուրիշ անգամ էլ՝ 1945 թ. սկզբներին Գ. Արովը գործուղվում է Ղրիմ, դարձյալ հայ զինվորների հետ հանդիպումներ ունենալու համար:

Այն բանից հետո, երբ խորհրդային բանակը շախշախիլ հարվածներ հասցրեց գերմանական զորքերին, վանդից նրանց երկրի սահմաններից, ՀԿ(թ)Պ կենտրոմի բյուրոն 1944 թ. Հուլիսի 12-ի որոշմամբ Մատենադարանի դիրեկտորին առաջարկեց մեկ ամսվա ընթացքում ձեռագրերը հանել սնուկ-ների միջից և տեղափորել դարակներում: Դահլիճում կատարել ախտահանում, ապահովել համապատասխան չերժություն: Միաժամանակ առաջարկվում է կազմակերպել քիմիական լարուատորիա՝ ուսումնասիրելու ձեռագրերի վիճակը և մշակել դրանք հիվանդություններից զերծ պահող և բուժող միջոցներ: Մինչև 1944 թ. նոյեմբերի 1-ը անցկացնել ձեռագրերի, պատառիկների, արխիվային նյութերի և տպագիր զբքերի ցուցակագրում, որի հիման վրա կազմել նոր զուլքամատյաններ, իսկ եղածները մուծել հին ցուցակների ֆոնզը: Կենտրոմի բյուրոյի որոշման մեջ ասվում էր, որ մինչև 1945 թ. հունվարի 1-ը պետք է ավարտի արխիվային բոլոր փաստաթղթերի մշակումը և նույն թվականին հրատարակության պատրաստել ձեռագրացուցակը, կազմակերպել ֆոտոաշխատանոց և կատարել ունիկալ զրբերի լուսանկարահանում, ընդարձակել վերանորոգման-կազմարարական բաժինը և 1944—1945 թթ. կազմել բոլոր շկազմված ձեռագրերը, համապատասխան պայմաններ ստեղծել զիտական աշխատակիցների կողմից ձեռագրերի ավելի լայն օգտավորժման համար<sup>23</sup>:

Կենտրոմի բյուրոն ՀԽՍՀ ժողկոմսովետին հանձնարարում է.

ա) Վերանայել Մատենադարանի հաստիքները և հասցնել դրանք 1940 թ. մակարդակին:

բ) Ապահովել Մատենադարանի և Հանրային զրադարանի համար էլեկտրական վառարանների, սարքավորումների և վառելիքի բաց թողումը 1944—45 թթ. ձմռանը:

գ) Խնդրել ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատին արտասահմանից Մատենադարանի համար գնելու հատուկ լուսանկարչական գործիք և ժապավեններ՝ ձեռագրերը նկարահանելու համար:

դ) Հաստատել ձեռագրերից, պատափիկներից և այլ նյութերից օգտվելու կարգը<sup>24</sup>:

Պատերազմական պայմաններում այսպիսի որոշման ընդունումը վկայում է այն մեծ հոգատարության մասին, որ ուներ Հայաստանի ղեկավարությունը մեր ժողովրդի հոգեւոր զանձերի պահոցի նկատմամբ: Մատենադարանի փոքրաթիվ անձնակազմը (այն ժամանակ մեզ մոտ աշխատում էր ընդամենը 14 մարդ) զործի է անցնում կատարելու կենտրոնական կոմիտեի բյուրոյի որոշումը: Դիրեկտոր Գ. Արովը 1944 թ. օգոստոսի 22-ին դիմում է ժողկոմսովետի նախադատի տեղակալ Ս. Կարապետյանին՝ խնդրելով 250 սընդուկները վեր բարձրացնելու, դատարկելու, դահլիճը մաքրելու, ձեռագրերը

<sup>23</sup> Նույն տեղում, թղթ. 80, վագ. 22:

<sup>24</sup> Թղթ. 80, վագ. 22:

փոշեհանելու համար կատարել բյուջեում չնախատեսված 4300 ռ. ծախս: Միաժամանակ խնդրում է թույլ տալ Մատենադարանի բյուջեից 5000 ռ. փոխանցել Հանրային զրադարանի վարչությանը՝ շենքի շեռուցման սիստեմի նորոգումներ կատարելու համար<sup>25</sup>:

Կենտկոմի բյուրոյի որոշման համաձայն, Մատենադարանում մշակվում է Հրահանգ Մատենադարանի ձեռագրերից և արխիվային նյութերից օգտվելու կարդի մասին և 1944 թ. օգոստոսին ներկայացվում ՀԽՍՀ ժողկոմսովետին: Մշակվում և ժողկոմսովետին է ներկայացվում նաև Մատենադարանի կանոնադրությունը:

1922 թ. հետո, երբ ձեռագրային ֆոնդը Մոսկվայից վերադարձվեց էջմիածին, անհրաժեշտություն առաջացավ Մատենադարանի համար կառուցելու նոր շենք: Շենքի անհրաժեշտությունը ավելի ակնհայտ դարձավ երեվան փոխադրվելուց հետո: Կառավարությունը նախատեսում էր Մատենադարանի համար կառուցել հատուկ շենք:

Անվանի ճարտարապետ Մարկ Գրիգորյանին հանձնարարվում է կազմել Մատենադարանի շենքի նախադիմք: Զնայած պատերազմական տարիների հազար ու մի դժվարություններին, նախագծման գործն առաջ էր դնում: 1943 թ. ապրիլի 29-ին ժողկոմսովետի նախագահի տեղակալ Դ. Աղրալյանին՝ Գ. Արովի ուղղած մի գրությունից տեղեկանում ենք, որ Մատենադարանի նոր շենքի նախադիմքն ավարտված է և պետք է կառուցման վայրում կատարվին երկրաբանական ուսումնասիրություններ<sup>26</sup>:

Այս գրության հանգիստ, գործնական տոնը մի պահ մոռացնել է տալիս ժամանակը: Նորից ուշագրություն դարձնենք գրության ստեղծման օրվան՝ 1943 թ. ապրիլի 29-ը: Հիտլերյան ֆաշիզմի վերջնական ջախջախմանը շատ ժամանակ կար: Թշնամին դեռ շատ ուժեղ էր: Խորհրդային զորքերի դեմ կռվում էին հինգ միլիոնից ավելի մինչև ատամները զինված զերմանական զորքերը, բայց մեր մարդիկ հավատում էին հաղթանակին: Այս էր պատճառը, որ սկսվեցին գործնական աշխատանքներ Մատենադարանի նոր շենքի կառուցման համար: Միաժամանակ ընթանում էին շենքի նախադիմքներ:

Մատենադարանի արխիվում պահվում է գրադարանային գործի ճանաչված մասնագետ, բանասեր Արամ Բաբայանի գրավոր կարծիքը Մատենադարանի շենքի մասին, թվադրված 15 փետրվարի 1945 թ.: Այն վերնագրված է. «Մատենադարանի շենքի նախադիմքը գրադարանային շենքի տեսակետից»<sup>27</sup>: Ցավով պետք է նշել, որ Ա. Բաբայանի շատ ճիշտ արված դիտողություններն այնքան էլ հաշվի շառնվեցին շենքի նախադիմք հետագա սրբազրությունների ժամանակ: Ա. Բաբայանն, օրինակ, գրում է. «Մատենադարանի նոր շենքի նախադիմքը գրադարանային շենքի պահանջների և հարմարությունների տեսակետից ունենալով որոշ առավելություններ... ունի նաև մի շարք թերություններ և բացեր: Այս վերջին հանգամանքը հետևանք է մասսամբ առաջադրանքի ոչ լրիվ և բավարար լինելուն, մասամբ էլ, ըստ երեվույթին, մասնագիտական սիստեմատիկ կոնսուլտացիայի բացակայության»:

25 Թղթ. 80, վագ. 123:

26 Թղթ. 80, վագ. 115:

27 Թղթ. 81, վագ. 8:

Նա զրում է, թե «նախագծում շի նախատեսված նաև հաճախորդների համար հանդերձարան, հաճախորդների հանգստի սրահ, դիրքեկտորի գիտ. գծով տեղակալի, գիտական քարտուղարի համար առանձնասենյակներ և այլն»: Գրքերի մշակման բաժինն ըստ նախագծի եղել է ներքնահարկում, բայց Ա. Բաբայանի քննադատությունն օդնեց գործին և այն բարձրացվեց վեր, բայց, ցավոք, այդպես էլ չլուսաված մասց Ա. Բաբայանի նկատած մի կարևոր վրապում՝ «Գրադարանային շենքի ներքին պլանավորման կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում,—զրում է նա,—վայրի ճիշտ ընտրությունը, Այս հարցը միանգամայն աշքաթող է արված նախագծում: Չի խմացվում, թե ընթերցասրահները և կարինեաները, գրքերը որտեղից և ի՞նչ կերպ են ստացվում գրապահոցից»<sup>28</sup>: Այս հարցը մինչև հիմա էլ մտահոգում է Մատենադարանի աշխատակիցներին:

Շատ կարևոր էր շենքի նախագծի քննադատությունը ճարտարապետական առումով: Այն հանձնարարված է եղել Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, երիտասարդ շնորհալի ճարտարապետ Աշոտ Աշոտի Ասատրյանին (Աստվածատրյանին) (1913—1947 թթ.), որը ծանր հիվանդության պատճառով ազատվել էր բանակից և մահացավ հաղթանակից երկու տարի անց՝ 1947 թ. հասցնելով նախագծել և կառուցել մի շարք շենքեր, ինչպես և երեսնը էջմիածնի հետ կապող «Հաղթանակ» կամուրջը:

Նրա կարծիքը վերնագրված է այսպես. «Քննադատությունը երեսնում կառուցվելիք Մատենադարանի շենքի էսքիզային նախագծի մասին»: Այն բաղկացած է 23 մեքենագիր էջերից և ունի հետևյալ բաժինները. 1. Տեղի ընտրությունը, 2. Գլխավոր հատակագծի լուծումը, 3. Ընարված կոմպոզիցիան, 4. Հատակագծի լուծումը, 5. Ինտերյերներ, 6. Ճակատներ, 7. Ընդհանուր եղբակացություններ:

Աշոտ Ասատրյանը գտնում էր, որ հեղինակի մոտեցումը նախագծին հիմնականում եղել է ճիշտ և որ ներկայացված նախագծում խնդիրների մեծ մասը գտել են իրենց լուծումը: «Սակայն նախագիծը պետք է ապրի իր երկրորդ էտապը, այն է՝ վերամշակման և նշված թերությունների վերացման էտապը»:

Բերենք Ա. Ասատրյանի կատարած դիտողություններից մի քանիսը.

1. Վերամշակել գլխավոր հատակագիծն այնպես, որ շենքն ունենա բակ կամ փոքրիկ հրապարակ տնտեսական կարիքների համար... վերացնելով կամ տեղափոխելով շենքը բոլորող խճուղին:

2. Շենքից դուրս բերել կաթսայատունը:

3. Նախասրահին կից նախագծել հանդերձարան հաճախորդների համար:

4. Խմբավորել ողջ աղմինիստրացիան տնտեսական բնույթի սենյակներում մի հարկում, միմյանց կից:

5. Բավարարել անհրաժեշտ լուսավորությամբ ընթերցարանը:

6. Խուսափել միջանցիկ սենյակներից 3-րդ և 4-րդ հարկերում:

7. Շենքի կոմպոզիցիան դարդացնելով ժամանակին աշխատավորություն և հարուստ սիլուետ:

28 Նույն տեղում, թղթ. 81, վակ. 8:

8. Զարգացնելով կողքի զալերեաները և կտպելով այն շենքի հետ, վերամշակել ճակատն այնպես, որ ստեղծվի միակերպ ծավալային լուծում, հիմք ընդունելով մուտքի պորտալը: Վերանախաղել կողային ճակատները:

9. Մշակել Սահակ և Մեսրոպ խմբաքանդակի ֆոնը ծառայող պատի հարթությունը:

Նա դանում է, որ «Այս շենքը գտնվելով Ստալինյան պողոտայի առանցքում, դիտվելու է պողոտայի ողջ երկարությամբ ծայրե ի ծայր, հետեարար կոմպոզիցիոն լուծման ժամանակ հեղինակը պիտք է նկատի ունենար մի հիմնական հանգամանք, այն է՝ շենքին տալ այնպիսի ծավալային լուծում, որ նա հետաքրքիր լիներ դիտման բոլոր հեռավորություններից, որպեսզի դիտողը գտնվելով պողոտայի հեռավոր ծայրում, սկզբում գրավվեր նրա սիլուետով, ավելի մոտենալով հետաքրքրվեր նրա ծավալային լուծմամբ, իսկ բոլորովին մոտենալով շենքին, գրավվեր նրա ֆրագմենտներով, դետալներով և այլն»:

Անհրաժեշտ է նշել, որ ճարտարապետ Աշոտ Ասատրյանի դիտողությունների մեծ մասը հաշվի է առնվել նախադով ճարտարապետի կողմից և օդագործվել նախադի հետազա մշակումների ժամանակ:

Երբ թշնամին լիովին վոնդվեց Կովկասյան լեռներից, գիտական կյանքն աշխուժացավ Մատենադարանում: Դրա լավագույն ապացույցը 1943 թ. Հոկտեմբերի 26-ից մինչև 30-ը հինգ օր տևողությամբ կայացած Մատենադարանի գիտական երկրորդ նստաշրջանն է, որին զեկուցումներով մասնակցում էին 14 գիտնականներ: Նախ ասենք, որ նստաշրջանը շատ լավ էր կազմակերպվել: 300 տպաքանակով լույս էր ընծայվել նրա ծրագիրը հայերեն և ռուսերեն<sup>29</sup>: Նիստերը տեղի էին ունենում Հանրային գրադարանի գահինինում: Զեկուցումներով հանդես եկան պատմական գիտ. դոկտոր Ա. Արրահամյանը (Հովհ. Սովիետուսի նորահայտ աշխատությունները), պատմ. գիտ. թեկնածու Ս. Երեմյանը (Մահկանաբերդի Արծրունիները), պրոֆ. Ա. Տիր-Պողոսյանը (Լուսնի տեսանելի շարժումը ըստ հայկական գրշագրերի և նրա արդյունքների նշանակությունը այսօրվա համար), փիլ. գիտ. թեկնածու Վ. Չալոյանը (Հովհան Որոտնեցու տրամարանության վերաբերյալ անտիպ գրշագիր աշխատություններ), աստիրանու Լ. Խաչիկյանը (Զենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» աշխատության հայկական թարգմանությունը), պրոֆ. Լ. Հովհաննիսյանը (Հայ բժշկական գրականությունը Հունական ազգեցությունների ծաղկման շրջանում): Զեկուցումներով հանդես եկան նաև Գ. Պետրոսյանը, դեղագործ Հ. Սեպետճյանը, քիմիկոս Տաղանջյանը, ինժեներ-քիմիկոս Տ. Մխիթարյանը, քիմիկոս Ա. Հարությունյանը, բանասեր Ա. Առաքելյանը:

Անհրաժեշտ դտանք թվարկել այս նստաշրջանի ժամանակ հանդես եկած գիտնականներին ու նրանցից ոմանց թեմաները, ցույց տալու համար, որ պատերազմի ծանր պայմաններում Մատենադարանի շուրջը համախմբված հիտոմիանները ձեռագրերի ուսումնասիրությամբ շարունակել են աշխատել իրենց թեմաների վրա, որոնք հիմք հանդիսացան հետազայում ստեղծելու բազմաթիվ ուշագրավ հետազոտություններ:

29 Նույն տեղում, թղթ. 80, վակ. 116, էջ 26—33:

Այս ժամանակ էր, որ ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Մատենադարանի գիտական խորհուրդը 1943 թ. նոյեմբերի 17-ին կայացած նիստում, որին մասնակցել ևս սահմազա՞ն Ֆ. Թրովը, քարտուղար Լ. Խաչիկյանը, պրոֆ. Հ. Աճառյանը, Դ. Դեմիրճյանը, դոկտ. Ա. Աբրահամյանը և առքին Սարգսյանը, որոշում կայացրեց ներկայացնել պրոֆեսորներ՝ Մանուկ Աբեղյանի, Լևոն Հովհաննիսյանի թեկնածությունը՝ Հայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամության համար<sup>30</sup>:

Չնայած պատերազմական պայմանների հարուցած բազմաթիվ հժվարություններին, Մատենադարանի գիտնականները կարողացան 1941—1945 թթ. լույս ընծայել մի շաբթ աշխատություններ, որոնք պատրաստ էին հրատարակության գնում 1941 թ.: Բավարկենք այդ գրքերը.

1. Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1655—1839 թթ.), պրակ I, առաջարանով, ժանութագրություններով և բառարանով կազմեց. Հար. Աբրահամյան, Երևան, 1941, պատ. Խմբադիր Բ. Հարությունյան, 13 տպ. մամուլ, 190 էջ, տիրած 1000, ստորագրված է տպագրության 22/7—1941 թ.:

2. «Գիտական նյութերի ժողովածու», № 1, Երևան, 1941, հանձնված է արտադրության 1941 թ., ստորագրված է տպագրության 1942 թ. ապրիլի 20-ին, 251 էջ, 22 մամուլ, տիրած 1000:

3. Յովիան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջարանով պատմական գիտությունների թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, 183 մամուլ, 300 էջ, ստորագրված է տպագրության 1942 թ. օգոստոսի 25-ին:

4. Հարությունյան Ա. Խ., Ներկերի և թանաքների գործածությունը Հին հայկական ձեռագրերում, 1941, 99 էջ:

5. Մելիք Փարսադանյան Խ., Մխիթար Հերացի (ոռւսերեն), 1941, 30 էջ:

6. Արքահամյան Աշոտ, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, 1942:

7. Արքահամյան Ա. Գ., Անանիա Շիրակացու մատենագրությունը, ուսումնասիրություն, Երևան, 1944, պատ. Խմբ. Հ. Աճառյան:

Արտադրություն էր իշեցվել և պետք է տպագրվեր նաև «Գիտական նյութերի ժողովածուի» երկրորդ հատորը, որը սակայն լույս տեսավ պատերազմի ավարտից հինգ տարի անց՝ 1950 թվականին:

Պատերազմի տարիներին իրականացված կարեռ աշխատանքներից է եղել նաև Մատենադարանի ձեռագիր պատառիկների ֆոնդի ստուգումը: Այն կատարել են գիտական աշխատակիցներ և սակայն նեշումյանը: Այդ կապակցությամբ 1944 թ. օգոստոսի 28-ին կազմվել է համապատասխան արձանագրություն, որի մեջ գրանցվել են նաև պատառիկների ֆոնդի կարդավորման և վերադասավորման վերաբերյալ մի շաբթ օգտակար առաջարկություններ:

Ինչպես թիկունքում մնացած այլ անձանց, այնպես էլ Մատենադարանի փոքրաթիվ անձնակազմի համար պատերազմի տարիներին կհնցաղային պայմանները շատ ծանր էին: Չնայած այն բանին, որ պաշտոնական բոլոր փաստաթղթերում Մատենադարանը համարվել է գիտական հաստատություն,

բայց նրա աշխատակիցները վարձատրվել են որպես սովորական զրադարձնային աշխատողներ: Այդպես էլ տրվել են նրանց թե հացի, և թե մթերքների բաժինները: Դիրեկտորի այս կապակցությամբ տված դիմումներն ու բողոքները արդյունք չեն տվել: Այլ հիմնարկությունների նման Մատենադարանն էլ պատերազմի սկզբում վերադաս մարմիններին խնդրանք էր ներկայացրել աշխատակիցներին, ինչպես և բանակ զորակոշվածների ընտանիքներին մշակովի հողով ապահովելու մասին: Աշխատանքի պայմանները դժվար էին. հաճախ ամիսներով էլեկտրական հոսանք չէր լինում, չէր գործում ջեռուցման սխմեմը, մարդիկ աշխատում էին կիսաքաղց վիճակում, հնամաշ զգեստներով, բայց բայց ամենայնի կատարում էին իրենց պարտականությունները: Զգացվում էր բացառապես ամեն բանի պակաս: Որպեսզի ավելի հստակ պատերազմներ վիճակը, մեջ կրերենք միայն 1942 թ. նոյեմբերի 2-ին կազմված մի գրություն, որի հեղինակը Գրողների միության նախագահության անդամ, բանաստեղծ Գեղամ Սարյանն է: «Մատենադարանի գիրեկտորին: Խնդրում ենք կարգադրել բաց թողնելու ժամանակավորապես երկու հատ լամպոշկա Գրողների միության կարիքների համար»<sup>31</sup>:

Այս պայմաններում ամենակարևոր հարցը ձեռագրերը հատկապես ձրման ամիսներին քիչ թե շատ բնական շերմաստիճանում պահելու էր և Մատենադարանի ղեկավարությունն անում էր ամեն ինչ, ապահովելու շենքի շեռուցմանը, որը շատ դժվարին խնդիր էր:

Պատերազմի տարիներին շղագարեց ձեռագրերի հոսքը դեպի Մատենադարան: 1941—1945 թթ. ընթացքում մեր ձեռագրային ֆոնդն ավելացել է 197 միավորով: Դրանցից 35-ը ձեռք են բերվել 1941 թ., 26-ը՝ 1942 թ., 1-ը՝ 1943 թ. (այդ տեսակետից 1943 թ. ամենաահազող տարին էր), 125-ը՝ 1944 թ. (դրանցից 91-ը առանձնացված են պատառիկների ֆոնդից), 10-ը՝ 1945 թ.:

Վերջում պետք է խոսնենք պատերազմի ժամանակ և պատերազմի հետեւանքով ստեղծված հայերեն մի ձեռագիր մատյանի մասին, որն արտաքին տեսքով շատ է նմանվում մեր միջնադարյան ձեռագրերին: Այդ մատյանում գրանցված են ֆաշիստական գերության մեջ գրված շափածու և արձակ սքանչելի գործեր, որոնց հեղինակը իր զիտակցական ողջ կյանքը հայ մշակութիւն հայոց պատմության սկզբնազրյուրների ուսումնասիրմանը նվիրած, Մատենադարանի աշխատակից Ասատուր Մնացականյանն է:

Թեոդոսիայի մոտակայքում գերի ընկնելով ղերմանացիների ձեռքը, Ա. Մնացականյանը ռազմագերիների մի մեծ խմբի մեջ տարվել է ողջ Ղրիմով, ապա Ռուբախնայի հարավով, Մոլդավիայով դեպի Ռումինիա: Զարհութելի պայմաններում հայտնված, թերսնումից և տառապանքներից հյուծված, հիվանդ, մի քանի անգամ մահվան եղրին հասած մեր Ասատուրը, որն արդեն ճանաշված բանաստեղծ էր Ասատուր Շեմս անվամբ, շկորցրեց հոգու արիւթյունը, հաղթանակի նկատմամբ պայծառ հավատը և նույնիսկ հումորի զգացումը, շասանվեց նրա սերը հայրենի երկրի, իր ծննդավայրի և իրեն այնքան հոգեւոր սնունդ տված Մատենադարանի նկատմամբ: Դրա լավագույն վկայությունը նրա այդ մատյանն է, որը կրում է «Բանաստեղծություններ՝ գրված փշաւարի ճանկերում» խորագիրը և ունի հետեւյալ բնաբանը.

<sup>31</sup> Թղթ. 80, վավ. 90, էջ 90:

«Վայրի հաւուկ մի բռնած, բերած  
Դրած զինք ի նեղ զնդան...»:

«Զեռագիր այս մատյանի մեծագույն արժանիքը անկեղծությունն է,— գրել է բանաստեղծ Վահագն Դավթյանը «Գրական թերթում» զետեղված «Տառապանքի ու երազանքի մատյան» հոդվածում,— թերթում ևս մատյանի մերթ վճիռ երազանքով, մերթ առօրյա մանրամասների ծանրությամբ, մերթ ներբողական բարձրառն, մերթ մտերմական քնարականությամբ շնչող էջերը և պատկերացնում այն միջավայրը, հոգեկան այն տագնապները, որոնց մեջ ապրել ու տուկացել են մի խումբ հայ զինվորներ:

Եվ կարդալով մատյանը շես կարող կրկին շխորհել, թե ինչպիսի կենսական ուժ է կարութը, երազանքը, սերը, շես կարող չհամոզվել, որ հենց դրանց շնորհիվ է փշալարերի ճանկերից փրկվել հեղինակը, որ նորից մարտընչի, վերադառնա հայրենիք, վերադառնա իր այնքան սիրած Մատենագարանը»:

Զեռագիրն ունի նաև հիշատակարան, որը ձեռվ այնքան նման է միջնադարյան մեր զրիշների թողած հիշատակարաններին.

«Փառք ամենազոր հույսին, որ մայրամուտից առաջ կհսօր է խոստանում...

Արդ, ևս, տկար զրշակս, ի մի հավաքելով զերության ճամփաներին, ճամբարներում ու հիվանդանոցներում հորինած արձակ ու շափածո այս թութանքներս, ավարտեցի «Գրքույկս սեավ» ի թվականի մերում ՌՅՂԲ-ին և սեպտեմբերի Լ-ին Գալաֆաթ կոչվող բազարի մոտ դանվող ռազմագերիների ճամբարում:

Ով ծանոթ ու անծանոթ ընկերներ, եթե հանդիպեք երբեմ այս զրքույկին որեւէ տեղ, բարի հիշեցեք ընկերներից Գուրգենին, որ զրելու թուղթ հայթայթեց, Գեորգին, որ թանաքս փոխեց, Նորայրին, որ զրշածայր տվեց, Ազատին, որ սոսինձ շնորհեց, Աշոտին, որ հաստ թել ընծայեց, Վելիխանին, որ բաշխեց բարակ թել, Հրայրին, որ ստվարաթուղթ ու կազմի շոր նվիրեց, Մուկուշին, որ զունավոր թղթով օժանդակեց, Արտաշեսին, որ դանակ զիշեց և Արմոյին, մեր շար ու բարի Արմոյին, որ կազմեց... Հետո միայն ինձ հիշեր, ոսկեվազցի Ասատուրիս...»:

Հետագայում Ասատուր Մնացականյանը ազատվեց զերությունից, կրկին զինքը ձեռքն առավ և մասնակցեց պատերազմին: Նա եղել է Բուղապեշտը զրոհող մեր զորքերի մեջ որպես դասակի հրամանատար և մի քանի պարզեներից բացի ուներ նաև «Բուղապեշտի զրավման համար» մեղալ:

Ահա այսպես է տառապել, կովկել ու հաղթանակել Մատենագարանի այն ժամանակա շարքային աշխատակիցներից, իսկ հետագայում ամենաարդյունավետ զիտնականներից մեկը, բաժնի վարիչ, պատմական դիտությունների գոկտոր, սլրոֆեսոր Ասատուր Մնացականյանը:

Պատերազմի հաղթական ավարտից ուղիղ երկու ամիս անց Մատենագարան է գալիս նշանավոր աղբյուրագետ-արվեստաբան Գարեգին Հովհաննեանը, որը բաշխատեղյակ էր Մատենագարանի գանձերին: Կրկին աշխատելով ձեռագրատանը, ծանոթանալով բոլոր կարգի նորություններին, նա բարձր գնահատական է տալիս Մատենագարանի վերջին տարիների գործունեությանը.

«Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր Հայրերից, — պրել է նա, — ձեռագիրների ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է Հայրենիքում: Մեր տասը տարվա բացակայության ընթացքում ոչ միայն ճոխացել է մեծ շափերով պետական գրադարանի ժողովածուն, այլև գիտության պահանջների համեմատ ցուցակների մշակմամբ ըստ բովանդակության, ըստ հեղինակների, թվականների և այլն, ամենամեծ դյուրություն է ստեղծված գիտական աշխատավորների համար իրենց ուսումնասիրությունների նյութերը հավաքել ժամանակի մեծ խնայողությամբ: Կարգավորյալ մատենադարաններն ու գրադարանները, թանգարանները մշակույթի, արվեստի և գիտության զարգացման անհրաժեշտ պայմաններն են: Եզ այդ պայմաններն ստեղծված են այսուղ ընդարձակ շափերով»<sup>32</sup>:

Վ. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## МАТЕНАДАРАН В ГОДЫ ВОЙНЫ 1941—1945 гг.

### Резюме

На основе архивных документов в статье делается попытка изложить историю Матенадарана в годы войны. В начальный период войны большинство сотрудников Матенадарана было мобилизовано в ряды Советской армии и честно выполнило свой патриотический долг. Силами оставшихся в тылу малочисленных сотрудников руководство Матенадарана (директор проф. Г. Абов) сумело осуществить надлежащий уход за рукописями и их надежное хранение. Не была полностью прервана научно-исследовательская работа, продолжалось составление тематических каталогов, описание архивных документов и изучение памятных записей манускриптов.

В течение военных лет было осуществлено издание семи научных работ, выполненных еще до войны. Несмотря на многочисленные трудности, были начаты работы по созданию и всестороннему обсуждению проекта нового здания Матенадарана, строительство которого началось после Победы.

V. R. CRIGORIAN

## LE MATENADARAN AUX ANNEES DE LA SECONDE GUERRE MONDIALE

### Résumé

Cet article est un essai de relater l'histoire du Maténadaran aux années de la guerre sur la base de documents d'archives. Au début de la guerre, la majorité des collaborateurs du Maténadaran furent mobili-

<sup>32</sup> Մատենադարան, Անտիկ ձեռագրացակների հավաքած և, Խ 89:

ses et accomplirent honnêtement leur devoir patriotique. Avec les quelques collaborateurs restés à l'arrière, la direction du Maténadaran (directeur, prof. G. Abov) réussit à organiser les services indispensables et à assurer la conservation des manuscrits. Les recherches ne furent pas complètement interrompues: la rédaction de catalogues thématiques, la description des documents d'archives, ainsi que l'étude des co'ophons des manuscrits continuèrent.

L'édition de sept ouvrages scientifiques rédigés avant la guerre fut aussi réalisée durant cette période. Malgré de nombreuses difficultés, on commença la conception et la discussion du projet du nouvel édifice du Maténadaran, dont la mise en chantier fut réalisée après la victoire.